ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 30/06/2016թ թիվ 20-Լ որոշմամբ
Փոփոխված է
30/08/2016թ թիվ 34-Լ որոշմամբ
26/09/2016թ թիվ 38-Լ որոշմամբ
28/02/2017թ թիվ 12-Լ որոշմամբ
26/12/2017թ թիվ 63-Լ որոշմամբ
26/04/2018թ թիվ 12-Լ որոշմամբ

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«23» մայիսի 2018թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ

(ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՎԱՔԱԳՐՎՈՂ ՈՐՈՇ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՅԴ ՎՃԱՐՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ)

ԵՐԵՎԱՆ - 2018

1. Սույն կանոններով կարգավորում են՝

1) Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի (այսուհետ՝ ՃՈ) կողմից ճանապարհատրանսպորտային պատահարների գրանցման գործընթացում հավաքագրվող՝ սույն կանոնների պահանջներին բավարարող ելեկտրոնային տվյալների (այսուհետ՝ ելեկտրոնային տվյալներ) ձեռք բերման նպատակով Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) կողմից ՃՈ-ի հետ համաձայնագրի կնքման հետ կապված հարաբերությունները,

2) ելեկտրոնային տվյալների նկատմամբ նվազագույն պահանջները և դրանք Բյուրոյի հետ համաձայնեցնելու գործընթացը,

3) ելեկտրոնային տվյալների տրամադրման դիմաց վճարումների կատարման կարգը,

4) ելեկտրոնային տվյալների տրամադրման համար կատարվող վճարումների չափը,

5) ելեկտրոնային տվյալների հավաքագրման համար կատարված վճարումների՝ Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունների (այսուհետ՝ Ապահովագրողներ) միջև բաշխելու սկզբունքները և գործընթացը: *(1-ին կետի 1-ին ենթակետը փոփ. է 26/12/2017թ թիվ 63-Լ)*

2. Բյուրոն Ապահովագրողների լիազորությամբ և վերջինների հաշվին ՃՈ-ի հետ կնքում է սույն կանոնների հավելված 1-ով սահմանված համաձայնագիր, (այսուհետ՝ Համաձայնագիր), իսկ Ապահովագրողները կնքված Համաձայնագրի և սույն կանոնների հիման վրա կատարում են վճարումներ հետևյալ պայմաններին բավարարող ճանապարհատրանսպորտային պատահարների գծով հավաքագրված ելեկտրոնային տվյալների ձեռք բերման համար՝

1) պատահարը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում,

2) պատահարի գծով օրենքով և Բյուրոյի կանոններով սահմանված դեպքերում ու կարգով պատահարին ներգրավված վարորդների միջև լրացված չէ համաձայնեցված հայտարարագիր,

3) պատահարի գծով օրենսդրությամբ սահմանված կարգով չի իրականացվել վարչական և (կամ) քրեական վարույթ,

4) ելեկտրոնային տվյալները համապատասխանում են Համաձայնագրով ելեկտրոնային տվյալների կազմի և կառուցվածքի նկատմամբ սահմանված տեխնիկական պահանջներին,

5) հավաքագրված ելեկտրոնային տվյալները սահմանված կարգով և ժամկետում ՃՈ-ի կողմից մուտքագրված են Համաձայնագրով նախատեսված միասնական էլեկտրոնային հարթակում: *(2-րդ կետը փոփ. է 26/04/2018թ թիվ 12-Լ)*

3. Ելեկտրոնային տվյալների կազմն ու կառուցվածքը, յուրաքանչյուր պատահարի գծով Ելեկտրոնային տվյալների ձեռք բերման համար վճարման ենթակա գումարի չափը, ինչպես նաև Ելեկտրոնային տվալների համար ՃՈ-ին վճարման կարգը, ժամկետները և գործընթացը սահմանվում են Համաձայնագրով:

4. Ելեկտրոնային տվյալների փոխանցման համար նախատեսված՝ սույն կանոնների 2-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված միասնական էլեկտրոնային

հարթակի նկարագրությունը և դրա օգտագործման ուղեցույցը տրամադրվում է Բյուրոյի կողմից ՃՈ-ին՝ Համաձայնագրի գործողության մեջ մտնելուց առնվազն 10 օր առաջ, իսկ դրանում կատարված փոփոխությունները՝ ենթադրվող փոփոխության ամսաթվից առնվազն 10 օր առաջ:

5. Ապահովագրողների կողմից Համաձայնագրի համաձայն ՃՈ-ին յուրաքանչյուր ամսվա համար վճարման ենթակա գումարը նրանց միջև բաշխվում է տվյալ ամսվան նախորդող ամսվա ընթացքում բոլոր Ապահովագրողների կողմից ԱՊՊԱ պայմանագրերի գծով հաշվեգրված ապահովագրավճարների հանրագումարում յուրաքանչյուր Ապահովագրողի կողմից ԱՊՊԱ պայմանագրերի գծով հաշվեգրված ապահովագրավճարների տեսակարար կշռին համապատասխան: Յուրաքանչյուր Ապահովագրողի կողմից ՃՈ-ին վճարման ենթակա գումարի չափի մասին տեղեկացման և Ապահովագրողների կողմից վճարման պարտավորության կատարման կարգն ու պայմանները սահմանվում են Համաձայնագրով: *(5-րդ կետը փոփ. է 26/04/2018թ թիվ 12-Լ)*

6. Համաձայնագրում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները կատարվում են բացառապես Բյուրոյի խորհրդի թույլտվությամբ՝ բացառությամբ Համաձայնագրի բաց թողնված մասերի լրացման և դրանցում կատարվող փոփոխությունների, որոնք փոփոխվում են Համաձայնագրի կողմերի կողմից՝ առանց Խորհրդի թույլտվության:

7. *(7-րդ կետը ուժը կորց. է 26/04/2018թ թիվ 12-Լ)*

Հավելված 1
«Ճանապարհատրանսպորտային պատահարների գրանցման գործընթացում հավաքագրվող որոշ ելակետային տվյալների ձեռք բերման համար իրավասու պետական մարմնին վճարումներ կատարելու և ապահովագրական ընկերությունների միջև այդ վճարները բաշխելու վերաբերյալ» RL 1-007 կանոնների

(Հավելված 1-ը փոփ" է 30.08.2016թ. թիվ 34-L, 26.09.2016թ թիվ 38-L, 28.02.2017թ թիվ 11-L և 26/04/2018թ թիվ 12-L)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԲՊ 18-____

ք. Երևան **«__» _____ 2018թ.**

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոն (այսուհետ՝ Բյուրո), որը գործում է իր և իր անդամ ապահովագրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) անունից և Ընկերությունների հաշվին, ի դեմս գործադիր տնօրեն Վահան Ավետիսյանի, ով գործում է Բյուրոյի RL 1-007 կանոնների, Ընկերությունների հետ կնքված պայմանագրի և Բյուրոյի կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը (այսուհետ՝ ՃՈ), ի դեմս պետ Եգոր Կարապետյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Համաձայնագրով ՃՈ-ն պարտավորվում է Համաձայնագրի 1.2-րդ կետով սահմանված պատահարների համար Համաձայնագրով սահմանված կարգով Բյուրոյին և Ընկերություններին տրամադրել իր կողմից հավաքագրվող՝ Համաձայնագրի Հավելված 1-ով, Հավելված 2-ով և Հավելված 3-ով նախատեսված ձևերին և պահանջներին բավարարող տվյալները (այսուհետ՝ Տվյալներ), իսկ Ընկերությունները պարտավորվում են Համաձայնագրով սահմանված ժամկետներում, չափով և կարգով վճարել Համաձայնագրին համապատասխան տրամադրված Տվյալների դիմաց:

1.2. Տվյալները ՃՈ-ի կողմից տրամադրվում են բոլոր ճանապարհատրանսպորտային պատահարների գծով, որոնք բավարարում են հետևյալ պայմաններին միաժամանակ՝

1.2.1. պատահարը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) տարածքում,

1.2.2. պատահարը գրանցված է ՃՈ կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերի առկայությամբ,

1.2.3. պատահարի գծով օրենսդրությամբ սահմանված կարգով չի իրականացվել վարչական և (կամ) քրեական վարույթ,

1.2.4. պատահարի գծով օրենքով և Բյուրոյի կանոններով սահմանված դեպքերում ու կարգով պատահարին ներգրավված վարորդների միջև լրացված չէ համաձայնեցված հայտարարագիր:

1.2.5. Համաձայնագիրը կնքվում է հօգուտ Ընկերությունների և նրանց հաշվին: Ընկերությունները Տվյալների տրամադրման համար վճարումները կատարում են անմիջականորեն ՃՈ-ին՝ համաձայն Բյուրոյի «Ճանապարհատրանսպորտային պատահարների գրանցման գործընթացում հավաքագրվող որոշ ելակետային տվյալների ձեռք բերման համար իրավասու պետական մարմնին վճարումներ կատարելու և ապահովագրական ընկերությունների միջև այդ վճարները բաշխելու վերաբերյալ» RL 1-007 կանոնների:

2. Տվյալների տրամադրման կարգը

2.1. ՃՈ-ն Տվյալները տրամադրում է դրանք այդ նպատակով Բյուրոյի կողմից հատուկ ստեղծված էլեկտրոնային հարթակում (այսուհետ՝ Հարթակ) տեղադրելու միջոցով:

2.2. ՃՈ-ն Տվյալները Հարթակում տեղադրում է համապատասխան ճանապարհատրանսպորտային պատահարի օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. Տեխնիկական պատճառներով Հարթակի միջոցով Տվյալների տրամադրման անհնարինության դեպքում ՃՈ-ն Համաձայնագրի 2.2-րդ կետով նախատեսված ժամանակահատվածում Տվյալները թղթային կամ էլեկտրոնային կրիչով տրամադրում է ճանապարհատրանսպորտային պատահարի կողմերին՝ նրանց հետ պայմանավորված եղանակով, իսկ տեխնիկական պատճառների վերացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում Հարթակում:

2.4. Հարթակի նկարագրությունը և դրա օգտագործման ուղեցույցը Բյուրոն տրամադրում է ՃՈ-ին Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց, իսկ դրանում կատարված փոփոխությունները՝ դրանք գործածության մեջ դրվելու օրվանից առնվազն 10 օր առաջ:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. *Բյուրոն իրավունք ունի*՝

3.1.1. ՃՈ-ից պահանջել կատարել Համաձայնագրով ՃՈ-ի համար սահմանված պարտականությունները և ապահովել Բյուրոյի և Ընկերությունների համար սահմանված իրավունքների իրացման հնարավորությունը,

3.1.2. եթե Տվյալներում կամ Տվյալների տրամադրման գործընթացում հայտնաբերվել են թերություններ՝ պահանջելու ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել դրանք:

3.2. Բյուրոն պարտավոր է՝

3.2.1. Համաձայնագրով նախատեսված չափով, կարգով և ժամկետներում Ընկերությունների կողմից ՃՈ-ին վճարումների չկատարման մասին տեղեկանալու պահից ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ այդ վճարումների կատարումն ապահովելու նպատակով,

3.2.2. իր իրավասության և հնարավորության սահմաններում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ կանխելու բոլոր այն իրավիճակների առաջացումը, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով առգրավումը և վարչական ներգործության համապատասխան միջոցների իրականացումը՝ կապված երրորդ անձանց կողմից Տվյալների ստացման, դիտման հետ: Սույն կետը չի կարող մեկնաբանվել իբրև Համաձայնագրի 3.2.3-րդ կետով սահմանված ապահովագրական գործառությունների կամ դրանցից բխող գործողությունների իրականացման ընթացքում Տվյալների օգտագործման արգելք կամ սահմանափակում.

3.2.3. Տվյալներն օգտագործել բացառապես ապահովագրական գործառույթների իրականացման նպատակներով, երրորդ անձանց չտրամադրել Տվյալները կամ դրանց դիտման հնարավորությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում՝ դատարանի որոշմամբ: Սույն կետի իմաստով երրորդ անձ չեն համարվում ՀՀ կենտրոնական բանկը, Ընկերությունները, ԱՊՊԱ ոլորտի փորձագետները, քրեական հետապնդում իրականացնող մարմինները, դատարանը, Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ ապահովագրական գործառույթների իրականացման դեպքերում, յուրաքանչյուր պատահարի հետ կապված տվյալ պատահարի տեղեկատվության մասով՝ պատահարին մասնակից տրանսպորտային միջոցների վարորդներն ու սեփականատերերը (ԱՊՊԱ պայմանագրով ապահովադիրները) և պատահարի հետևանքով վնաս կրած այլ անձինք, ինչպես նաև նրանց իրավահաջորդներն ու ներկայացուցիչները, ԱՊՊԱ հատուցման՝ ներառյալ հատուցման գծով հետադարձ պահանջի կիրառման գործընթացում ներգրավված այլ անձինք.

3.2.4. Հարթակի խափանման դեպքում էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով այդ մասին անհապաղ ծանուցել ՃՈ-ին,

3.2.5. Մինչև յուրաքանչյուր ամսվա երկրորդ աշխատանքային օրը ՃՈ-ին ու Ընկերություններին ուղարկել Համաձայնագրի շրջանակներում նախորդ ամսվա ընթացքում ՃՈ կողմից տրամադրված Տվյալների համար ՃՈ-ին վճարման ենթակա ընդհանուր գումարի և Բյուրոյի RL 1-007 կանոնների համաձայն Ընկերությունների միջև գումարի բաշխման հաշվարկը պարունակող տեղեկանքը:

3.3. ՃՈ-ն իրավունք ունի՝

3.3.1. Բյուրոյից պահանջել կատարել Համաձայնագրով Բյուրոյի համար սահմանված պարտականությունները, ապահովել ՃՈ-ի համար սահմանված իրավունքների իրացման հնարավորությունը.

3.3.2. Բյուրոյից պահանջել ապահովել Ընկերությունների կողմից Համաձայնագրով նախատեսված չափով, կարգով և ժամկետներում վճարումների կատարումը:

3.4. ՃՈ-ն պարտավոր է՝

3.4.1. Ապահովել Տվյալների հնարավորինս համապատասխանությունը օբյեկտիվ իրականությանը.

3.4.2. Տվյալները տրամադրել համաձայն Համաձայնագրի Հավելված 1-ով, Հավելված 2-ով և Հավելված 3-ով նախատեսված ձևերի և դրանցով սահմանված պահանջների՝ ապահովելով դրանց հնարավորինս ճշգրիտ լրացումը.

3.4.3. Տվյալները տրամադրել Համաձայնագրով նախատեսված կարգով և ժամկետներում.

3.4.4. Լավագույն ջանք գործադրել իր գործողությունների կամ անգործության հետևանքով ի հայտ եկած թերությունները ողջամիտ ժամկետներում վերացնելու ուղղությամբ: Ընդ որում՝ սխալ տեղեկատվության ճշգրտման կամ բաց տեղեկատվության լրացման դեպքում Տվյալների նոր լրացված կամ ճշգրտված մասը ստորագրվում է բոլոր այն անձանց կողմից, ովքեր ի սկզբանե կազմել և ստորագրել են Տվյալները: Շտկված տվյալները ՃՈ-ի կողմից մուտքագրվում են Հարթակ այն շտկվելու պահից սկսած 2 օրվա ընթացքում, եթե տվյալ պատահարի գծով նախկինում մուտքագրված Տվյալները Բյուրոյի կողմից հեռացվել են Հարթակից..

3.4.5. Ի հայտ եկած թերությունների վերացման համար Համաձայնագրի 3.4.4-րդ կետով նախատեսված ժամկետի պահպանման անհնարինության դեպքում այդ մասին հավելյալ ծանուցել Բյուրոյին՝ նշելով ժամկետի կետանցման հիմնավոր պատճառները և թերության վերացման համար անհրաժեշտ հավելյալ ժամանակահատվածը.

3.4.6. Հարթակն օգտագործել Բյուրոյի կողմից Համաձայնագրի համաձայն տրամադրված ուղեցույցին համապատասխան:

4. Համաձայնագրի գինը, վճարման կարգը և ժամկետները

4.1. Համաձայնագրով նախատեսված յուրաքանչյուր ճանապարհա-տրանսպորտային պատահարի վերաբերյալ Համաձայնագրին համապատասխան տրամադրված Տվյալների համար վճարման ենթակա գումարի չափը կազմում է 4.000 (չորս հազար) ՀՀ դրամ, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև ՃՈ-ի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2. Համաձայնագրի գինը Ընկերությունները վճարում են ՃՈ-ին ամսական կտրվածքով՝ Համաձայնագրի 3.2.5-րդ կետով սահմանված բաշխման տեղեկանքին համապատասխանող հաշվարկային փաստաթուղթը ստանալուց հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. *(4.3-րդ կետը ուժը կորց. է)*

4.3.1. *(4.3.1-րդ կետը ուժը կորց. է)*

4.3.2. *(4.3.2-րդ կետը ուժը կորց. է)*

4.4. Բյուրոն, Համաձայնագրի 3.2.5-րդ կետով բաշխման տեղեկանքը նույն կետով սահմանված կարգով և անձանց ուղարկելով, հավաստում է, որ դրանում նշված քանակով Տվյալները Համաձայնագրի համաձայն ստացվել են տեղեկանքում նշված ամսվա ընթացքում:

4.5. Ընկերությունները Համաձայնագրով նախատեսված վճարումները կատարում են բաշխման տեղեկանքով յուրաքանչյուրի համար սահմանված չափով՝ ՃՈ-ի կողմից Ընկերություններին դուրս գրված հաշվարկային փաստաթղթում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. ՃՈ-ի կողմից Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Բյուրոն իրավունք ունի ՃՈ-ից

պահանջել վճարելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար նախորդ ամսվա համար վճարված գումարի 0,1%-ի չափով:

5.2. Բյուրոյի կողմից Համաձայնագրի 3.2.5-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման համար ՃՈ-ն իրավունք ունի Բյուրոյից պահանջել վճարելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1%-ի չափով:

5.3. Համաձայնագրով Կողմերը սահմանում են, որ դատական կարգով ապացուցված (հաստատված)՝ ՃՈ ծառայողների կողմից դիտավորությամբ Տվյալներում կեղծ կամ ոչ արժանահավատ տվյալներ մուտքագրելու կամ Համաձայնագրով նախատեսված այլ պարտականություններ խախտելու հետևանքով երրորդ անձանց կողմից Բյուրոյի կամ Ընկերությունների նկատմամբ պահանջի չափով Բյուրոն պահանջի իրավունք ունի ՃՈ-ի նկատմամբ:

5.4. Համաձայնագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.5. Տույժերի և /կամ/ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.6. Ընկերությունների կողմից Համաձայնագրի 4.2-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման համար ՃՈ-ն իրավունք ունի Ընկերություններից պահանջել վճարելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1%-ի չափով:

5.7. Բյուրոն հավաստում է, որ Ընկերությունների կողմից Համաձայնագրով սահմանված վճարումների պատշաճ կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար ունի բավարար լիազորություններ:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը «ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»

Համաձայնագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Համաձայնագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Համաձայնագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Համաձայնագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1. Կողմերի՝ Համաձայնագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մայիսի 1-ին և գործում է անորոշ ժամկետով: Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում Կողմերի միջև 2016թ. օգոստոսի 16-ին կնքված թիվ ԲՊ 16-001 համաձայնագիրը, ընդ որում՝ Կողմերի միջև 2016թ. օգոստոսի 16-ին կնքված թիվ ԲՊ 16-001 համաձայնագրի ուժը կորցնելը չի ազատում Կողմերին մինչև այդ պահն ստանձնած պարտավորությունների կատարումից: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի դադարեցնել Համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին դադարեցման օրվանից առնվազն 3 (երեք) ամիս առաջ մյուս կողմին գրավոր ծանուցելու միջոցով:

7.3. Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ կամ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան Համաձայնագրի անբաժանելի մասը:

7.4. Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով այդպիսիք առաջանալու պահից 30 օրվա ընթացքում: Նշված ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Համաձայնագրի հետ կապված վեճի կապակցությամբ հարուցված դատական և/կամ վարչական վարույթը չի ազատում կողմերին այն պարտավորությունների կատարումից, որոնք որևէ առնչություն չունեն տվյալ վեճի հետ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.6. Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

7.7. Համաձայնագրից ծագած վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Համաձայնագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8. Համաձայնագիրը պարտադիր է Կողմերի իրավահաջորդների համար՝ այն պայմաններով ինչ նախատեսված է Համաձայնագրով, բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ օրենսդրությունը կամ կողմերը այլ բան չեն սահմանում:

7.9. Համաձայնագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8. Կողմերի իրավաբանական հասցեները, այլ վավերապայմանները և ստորագրությունները

ԲՅՈՒՐՈ՝	**ՃՈ՝**
Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո	**ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն**
հասցեն՝ _____	**հասցեն՝** _____
ՀՎՀՀ՝ _____	**ՀՎՀՀ՝**_____

Բանկ՝ _____
Հ/Հ՝
_____
էլ. փոստ՝ _____
հեռ.՝ _____

գործադիր տնօրեն՝
(ստորագրություն)
Կ.Տ.

Բանկ՝ _____
Հ/Հ՝ _____
էլ. փոստ՝ _____
հեռ.՝ _____

Պետ՝
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1
«__» _____, 2018թ. կնքված թիվ _____
համաձայնագրի
Ելակետ 1
(Հավելված 1-ը փոփ. է 28.02.2017թ թիվ 11-Լ)

<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ</u> N
<u>Նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարի (ՃՏՊ) գործով</u>
<u>վարչական վարույթ իրականացնելու պահանջից հրաժարվելու և ՃՏՊ-ի տվյալների մասին</u>

Արձանագրությունը կազմելու ամսաթիվը և ժամը				
	օր	**ամիս**	**տարի**	**ժամ**
1. ՃՏՊ մասին ընդհանուր տվյալներ				
1.1. ՃՏՊ ամսաթիվը և ժամը				
	օր	**ամիս**	**տարի**	**ժամ**
1.2. ՃՏՊ վայրի հասցեն				
	մարզ	**քաղաք/գյուղ**	**փողոց (այլ կողմնորոշիչ հասցե)**	

2. ՃՏՊ-ին մասնակից տրանսպորտային միջոցների (ՏՄ) և այլ գույքի մասին տեղեկատվություն					
2.1. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 1			**2.2. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 2**		
☐ **Լքել է ՃՏՊ վայրը**	☐ **Առկա է**	**ՏՄ առկայությունը**	☐ **Լքել է ՃՏՊ վայրը**	☐ **Առկա է**	
		Հաշվառման համարանիշը			
☐ **Առկա չէ**	☐ **Առկա է _____**	**Հաշվառման վկայագրի սերիան և համարը**	☐ **Առկա չէ**	☐ **Առկա է _____**	
2.3. ՃՏՊ-Ի ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍՎԱԾ ԱՅԼ ԳՈՒՅՔ		☐ **Առկա չէ**	☐ **Առկա է _____**		
3. ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդների մասին տեղեկատվություն					
ՎԱՐՈՐԴ 1			**ՎԱՐՈՐԴ 2**		
		Անունը և ազգանունը			
☐ **Առկա չէ**	☐ **Առկա է _____**	**Վարորդական վկայականի սերիան, համարը**	☐ **Առկա չէ**	☐ **Առկա է _____**	
☐ **Սթափ**	☐ **Ոչ սթափ**	**Վարորդի սթափություն**	☐ **Սթափ**	☐ **Ոչ սթափ**	
		Հեռախոսահամարը			

4. ՃՏՊ-ի վայրի, եղանակային պայմանների և մթնոլորտային տեղումների մասին տեղեկատվություն		
4.1. ՃՏՊ պահին եղանակային պայմանները և	☐ **Պարզ-արևային** ☐ **Պարզ-ամպամած** ☐ **Մառախլապատ**	☐ **Անձրև** ☐ **Ձյուն** ☐ **Կարկուտ**

մթնոլորտային տեղումները		
4.2 ՃՏՊ վայրի ճանապարհային ծածկույթը	☐ Ասֆալտբետոնյա ☐ Ցեմենտբետոնյա ☐ Սալաքարային	☐ Մանրախիճ հիմնային ☐ Այլ _____
4.3 ՃՏՊ պահին ճանապարհի վիճակը	☐ Չոր ☐ Թաց ☐ Ձյունապատ	☐ Մերկասառույց ☐ Ծածկված կոշտացած ձյունով ☐ Այլ _____
5. Վարորդների նշումները	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 1	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 2
5.1. ՃՏՊ-ին նախորդող պահին տրանսպորտային միջոցների երթևեկության ուղղության վերաբերյալ	_____-ից (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ) _____ (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ)	_____-ից (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ) _____ (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ)
	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 1	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 2
5.2. ՃՏՊ-ին նախորդող պահին տրանսպորտային միջոցների երթևեկության գոտին (հաշված տվյալ ուղղության երթևեկելի մասի եզրից)	☐ Առաջին ☐ Հինգերորդ ☐ Երկրորդ ☐ Վեցերորդ ☐ Երրորդ ☐ Հանդիպակաց ☐ Չորրորդ երթևեկություն	☐ Առաջին ☐ Հինգերորդ ☐ Երկրորդ ☐ Վեցերորդ ☐ Երրորդ ☐ Հանդիպակաց ☐ Չորրորդ երթևեկություն
5.3. ՃՏՊ-ին նախորդող պահին գործողությունների վերաբերյալ	☐ Երթևեկության սկիզբ ☐ Ուղիղ երթևեկություն ☐ Աջ վերադասավորում ☐ Ձախ վերադասավորում ☐ Անշարժ վիճակ ☐ Աջ շրջադարձ ☐ Ձախ շրջադարձ ☐ Հետադարձ ☐ Հետընթաց ☐ Վազանց ☐ Կողանցում ☐ Արգելակում ☐ Կայանում	☐ Երթևեկության սկիզբ ☐ Ուղիղ երթևեկություն ☐ Աջ վերադասավորում ☐ Ձախ վերադասավորում ☐ Անշարժ վիճակ ☐ Աջ շրջադարձ ☐ Ձախ շրջադարձ ☐ Հետադարձ ☐ Հետընթաց ☐ Վազանց ☐ Կողանցում ☐ Արգելակում ☐ Կայանում
5.4. ՃՏՊ-ին նախորդող պահին լուսային ազդանշանների վերաբերյալ	☐ Գաբարիտային ☐ Վթարային ազդանշան ☐ Հակամառախուղային լապտեր ☐ Հեռահար ☐ Մոտակա	☐ Գաբարիտային ☐ Վթարային ազդանշան ☐ Հակամառախուղային լապտեր ☐ Հեռահար ☐ Մոտակա

	☐ Թարթիչ աջ ☐ Թարթիչ ձախ	☐ Թարթիչ աջ ☐ Թարթիչ ձախ
5.5. Խաչմերուկ մուտք գործելու պահին լուսացույցի ազդանշանի վերաբերյալ *(կիրառվում է կարգավորվող խաչմերուկներում ՃՏՊ-ների դեպքում)*	☐ Կարմիր ☐ Կարմիր և դեղին ☐ Կանաչ ☐ Դեղին ☐ Չէր աշխատում	☐ Կարմիր ☐ Կարմիր և դեղին ☐ Կանաչ ☐ Դեղին ☐ Չէր աշխատում
5.6. ՃՏՊ-ի պահին ուղևորի, բեռի, կցորդի և գազի բալոնի առկայության մասին	___ Ուղևորների քանակ ☐ Կցորդի առկայություն ☐ Գազի բալոնի առկայություն ☐ Բեռի առկայություն	___ Ուղևորների քանակ ☐ Կցորդի առկայություն ☐ Գազի բալոնի առկայություն ☐ Բեռի առկայություն
5.7. ՃՏՊ-ի առաջացման մեջ իրենց մեղավորության վերաբերյալ (նախնական)	☐ Մեղավոր եմ ամբողջությամբ ☐ Մեղավոր եմ մասամբ ☐ Մեղավոր չեմ	☐ Մեղավոր եմ ամբողջությամբ ☐ Մեղավոր եմ մասամբ ☐ Մեղավոր չեմ

6. Այլ նշումներ (ըստ անհրաժեշտության)

_____

_____

7. Ստորագրություններ

Արձանագրությունը կազմեց		
	Անունը, ազգանունը, կրծքանշանի համարը	Ստորագրությունը

Արձանագրության բովանդակության հետ համաձայն ենք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տալիս ենք մեր համաձայնությունը սույն ՃՏՊ-ի վերաբերյալ գործով վարչական վարույթ իրականացնելու պահանջից հրաժարվելու մասին, որի համար ստորագրում ենք՝

ՎԱՐՈՐԴ 1		ՎԱՐՈՐԴ 2
	Անունը, ազգանունը	
	Ստորագրությունը	

Հավելված 2
«__» _____, 2018թ. կնքված թիվ _____
համաձայնագրի
Ելակետ 2

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍՆԵՐՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ (ՃՏՊ) ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

<u>Ելակետային տվյալների կազմը</u>՝

1. Ճանապարհի լայնությունը (չափերը),

2. Ճանապարհի երկայնական և լայնական թեքությունները,

3. Պատահարի վայրում տեղադրված (կատարված) և պատահարի վրա ազդեցություն ունեցած լուսացույցները, ճանապարհային նշանները և գծանշումները, իսկ կարգավորողի առկայության դեպքում՝ կարգավորողի կարգադրություններն ու ազդանշանները պատահարին նախորդող պահին,

4. Պատահարից հետո տրանսպորտային միջոցների դիրքերն անշարժ կողմնորոշիչների և միմյանց նկատմամբ,

5. Պատահարի հետևանքով առաջացած հետքերը (արգելակային, քերծվածքի, սահքի, հեղուկի, հողի և այլն) անշարժ կողմնորոշիչների նկատմամբ և դրանց վերաբերյալ չափային տվյալներ,

6. Պատահարի հետևանքով տրանսպորտային միջոցից պոկված (շպրտված) իրերը (տրանսպորտային միջոցի դետալ և այլն) անշարժ կողմնորոշիչների նկատմամբ,

7. Երթևեկելի մասում առկա խոչընդոտներ (փոսեր, տրանսպորտային միջոցներ, այլ առարկաներ և այլն)՝ դրանց չափերը, խորությունը և տեղակայումը,

8. Պատահարից վնասված տրանսպորտային միջոցների վրա առկա մեխանիկական վնասվածքների տեղակայումը:

<u>Նշված ելակետային տվյալները տրամադրվում են</u>՝

1. ՃՏՊ մասին ամբողջական տեսաձայնագրության միջոցով, որը հնարավորություն է տալիս ստանալ տվյալ պատահարի ամբողջական պատկերը, և (կամ)

2. ՃՏՊ վայրի վերաբերյալ կազմված սխեմայի միջոցով՝ կազմված ձեռքով կամ համակարգչային եղանակով:

Հավելված 3
«__» _____, 2018թ. կնքված թիվ _____
համաձայնագրի

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍՆԵՐՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ (ՃՏՊ) ՎԱՅՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ՃՏՊ վայրում առնվազն հինգ տարբեր դիրքերից կատարված լուսանկարներ, որոնք առնվազն արտացոլում են՝

1.1 պատահարից հետո պատահարին մասնակից բոլոր ավտոտրանսպորտային միջոցների դիրքերն անշարժ կողմնորոշիչների և միմյանց նկատմամբ (ընդ որում դա պետք է կատարվի այնպես, որ դրանցից գոնե մեկում տեսանելի լինեն նաև ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերը),

1.2 պատահարից վնասված ավտոտրանսպորտային միջոցների վրա առկա մեխանիկական վնասվածքները:

2. Այն դեպքում, երբ ՃՏՊ հետևանքով ավտոտրանսպորտային միջոցներից բացի վնասվել է նաև այլ գույք, ապա նաև տվյալ վնասված գույքի՝ առնվազն երկու տարբեր դիրքերից լուսանկարներ:

3. Սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված լուսանկարները կարող են չտրամադրվել այն դեպքերում, երբ ներկայացվել է ՃՏՊ մասին ամբողջական տեսաձայնագրություն, որը հնարավորություն է տալիս ստանալ տվյալ պատահարի ամբողջական պատկերը: